

Դիլիջանի քաղաքապետ
պարոն Դավիթ Սարգսյանին

«Ֆոքրս օն Չիլդրեն Նաու»
բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Անահիտ Քալանթարյանից
հեռ`098 132 112

Հարգելի պարոն Սարգսյան,

Հայտնում եմ Ձեզ, որ մեր կազմակերպությունը՝ «Ֆոքրս օն Չիլդրեն Նաու» ԲԿ-ն, պատրաստակամ է Դիլիջան քաղաքում իրականացնել թիվ 1 մանկապարտեզի խաղահրապարակի տեղադրման ծրագիր՝ համայնքապետարանի կողմից մասնակցության և որոշակի պայմանների կատարման դեպքում:

Խաղահրապարակների գույք

«Ֆոքրս օն Չիլդրեն Նաու» ԲԿ-ի կողմից խաղահրապարակի տեղադրման ծրագիր իրականացնելու դեպքում համայնքը պետք է մինչև սարքավորումների առաքումը վճարի խաղահրապարակի արժեքի 10%-ը: Եթե համայնքը չի հետևում խաղահրապարակի համար ստորև նշված բոլոր պահանջներին, ապա «Ֆոքրս օն Չիլդրեն Նաու» ԲԿ-ն իրեն իրավունք է վերապահում վերադարձնել համայնքի կողմից խաղահրապարակի համար իրեն վճարված գումարը և հեռացնել սարքավորումները:

Խաղահրապարակ տեղադրելու համար անհրաժեշտ է, որպեսզի նախքան խաղահրապարակի սարքավորումների մատակարարումը

խաղահրապարակի տարածքը ծածկելու համար տրամադրվի ավագ (ավագի քանակը կորոշվի խաղահրապարակի տարածքի մակերեսով), ապահովվի խաղահրապարակի անվտանգ միջավայր, տարածքը պարսպապատվի, տարածքը մաքրվի քարերից, շինանյութից, ծառերի բներից և այլն: Մանկապարտեզի տարածքից պետք է նաև հանված լինեն հին և անապահով խաղահրապարակի սարքավորումները, եթե այդպիսիք կան:

Հույս ունեմ, որ այս տարվա համատեղ աշխատանքը կլինի արդյունավետ և նպաստի նախադպրոցական կրթության զարգացմանը: Կից ուղարկում եմ գույքի ցանկը:

Հարգանքներով՝

/  Ա. Քալանթարյան

11.03.2022թ.



